ArmLur.am

ISSN 1829-2763

ՕՐԱԹԵՐԹ ԲՈԼՈՐԻ ԵՎ ԱՄԵՆ ԻՆՉԻ ՄԱՍԻՆ

Ժողովուրդ

10 դեկտեմբերի երեքշաբթի 2024
տպագրության ԺԳ տարի

172
(3022)

100 դրամ

քաղաք Երեւան, Աբովյան 22ա/3 (0010) + 374 10 546423 info.armlur@gmail.com, info.zhoghovurd@gmail.com

Ա. ՔՈՉԱՐՅԱՆԸ ԱՅՆՔԱՆ ԷԼ ՉԷՐ ՍԽԱԼՎՈՒՄ ՓԱՄԲՈՒԽՉՅԱՆԻ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ



ՔՊ-ում սկանդալները հաջորդում են մեկը մյուսին: Որքան պայքարում են արտահոսքերի դեմ, դրանք, միեւնույնն է, շարունակվում են:

ArmLur.am-ի տեղեկություններով՝ Երեւանի փոխքաղաքապետ Արմեն Փամբուխչյանը թիմում լուրջ խնդիրներ ունի, եւ նրա «հարցը դրվել է» ՔՊ վարչության նիստերից մեկում, որին մասնակցել է նաեւ Անդրանիկ Քոչարյանը:

«Ժողովուրդ» օրաթերթը ավելի վաղ գրել էր, որ ՔՊ խմբակցության պատգամավոր Անդրանիկ Քոչարյանը, ի թիվս մյուս թիմակիցների, Արմեն Փամբուխչյանի դեմ եւս կոմպրոմատների մի ողջ «թղթապանակ» է ներկայացրել, որպեսզի ապացուցի, որ Փամբուխչյանը կոռուպցիոն մի շարք գործարքների մեջ է թաթախված:

«Ժողովուրդ» օրաթերթի տեղեկություններով՝ Նիկոլ Փաշինյանը հենց այդ օրը հրավիրված վարչության դռնփակ նիստի ժամանակ ճշտել է, որ Անդրանիկ Քոչարյանի բացահայտումները Արմեն Փամբուխչյանի կապակցությամբ այնքան էլ անիրական չեն:

Մասնավորապես բացահայտվել է Արմեն Փամբուխչյանի՝ ՔՊ-ի աչքի փուշ նախկինների հետ մտերիմ հարաբերություններ ունենալու փաստը, ինչպես նաեւ բացահայտվել են նրա մասնակցությամբ կոռուպցիոն գործարքներ:

Նիկոլ Փաշինյանը պարզել է, որ Արմեն Փամբուխչյանը ԱԺ նախկին պատգամավոր Հակոբ Հակոբյանի (Լեդի Հակոբ) որդուց մեքենա է նվեր ստացել, ինչպես նաեւ ԱԺ նախկին պատգամավոր Միհեր Սեդրակյանի՝ (Թոխմախի Միհեր) որդու հետ մտերիմ հարաբերություններ ունի եւ օգտվում է առատաձեռն նվիրատվություններից:

Հաստատվել են նաեւ լրատվամիջոցների բացահայտումները, որ Երեւանի փոխքաղաքապետ, ՔՊ վարչության անդամ Արմեն Փամբուխչյանի 71-ամյա հայրը 40 հեկտար հողեր է ձեռք բերել Արմավիրի մարզում՝ դեղձի այգիներ հիմնելու համար: Փամբուխչյանը այս նպատակով նաեւ 1,5 միլիարդ դրամի վարկ է ստացել եւ 102 մլն դրամ (մոտ 270 հազար ԱՄՆ դոլար) պետությունից՝ որպես սուբսիդիա՝ նվեր:

ՔՊ-ում հենց այս բացահայտումների հետեւանք են համարում նաեւ Արմեն Փամբուխչյանի վարորդին պատկանող Lexus-ների հրդեհվելը ավտոտնակում՝ անհասկանալի հանգամանքներում, ինչի մասին ArmLur.am-ը հայտնել էր:

Անդրանիկ Քոչարյանն էլ իրենից գոհ է, որ իր հայտարարությունները Արմեն Փամբուխչյանի վերաբերյալ հաստատվել են. հրաժարվել է նրանից ներողություն խնդրել, ինչպես դա արել էր ՔՊ խմբակցության պատգամավորներ Սիսակ Գաբրիելյանի եւ Հրաչյա Հակոբյանի դեպքում (Քոչարյանը նրանցից ներողություն էր խնդրել):

ՔՊ-ականները բարոյապես ոչնչացնում ու խայտառակում են Նիկոլ Փաշինյանի հրահանգը չկատարած, իրենց նախկին թիմակից Հովիկ Աղազարյանին: Դեռ դեկտեմբերի 4-ի իր ճեպազրույցում ԱԺ արդեն անկախ պատգամավոր Հովիկ Աղազարյանը սկանդալային հայտարարություն էր արել, որ իր անձնական դաշտում գտնվող նյութերից, նամակագրություններից հայտնվել էին վարչությունում եւ վարչապետի մոտ, ինչը, ՔՊ-ականների խոսքով, շոկի մեջ է գցել իրենց ու անգամ ամաչում են խոսել այդ մասին: «Ժողովուրդ» օրաթերթի տեղեկություններով՝ ՔՊ-ականները Հովիկ Աղազարյանի անձնական նամակագրությունը հանել են քննիչի կողմից առգրավված հեռախոսի միջից, տպել են «Ֆեյսբուք»-ի messenger-ի ՍՄՍ-ները: Ստացվում է, իրավապահները մուտք են գործել պատգամավորի messenger, հանել նրա նամակագրությունները, անգամ ջնջված նամակներն են վերականգնել, տպել են դրանք թղթի վրա եւ տվել Նիկոլ Փաշինյանին, ինչն էլ նախ հրապարակվել է վարչության դռնփակ նիստին, ապա նույն նամակագրությունը վարչության նիստի հաջող օրը բաժանվել է նաեւ խմբակցության պատգամավորներին:

Մանրամասները՝ ArmLur.am կայքում:



ՀՀ Երեւան քաղաքի պետական բյուջեից տրամադրվել էր 90 մլն դրամ՝ դեկտեմբերի 8-ին Հանրապետության հրապարակի գլխավոր տոնածառի լույսերը վառելու եւ մարդկանց շնչահեղձ անելու համար: «Ժողովուրդ» օրաթերթը տեղեկացավ այս մասին պաշտոնական աղբյուրներից: Երեւանում հանրապետության գլխավոր տոնածառի լույսերի վառման արարողությունից հետո հրապարակը վերածվել էր շուկայի: Բանն այն է, որ թանկարժեք հրավառությունը միայն ուրախություն չէ, որ պատճառել է ներկաներին եւ Կենտրոնի բնակիչներին. այն նաեւ բողոքի մեծ ալիք է բարձրացրել: «Ժողովուրդ» օրաթերթին ահազանգած քաղաքացիները պնդում են, որ թեեւ հրավառությունն ու միջոցառումը գեղեցիկ եւ ստացված էին, սակայն քաղաքացիների տեղաշարժը եւ կազմակերպչական մասն անկազմակերպ էր: Հրավառությունից հետո մարդկանց հոսքը շրջափակել է Հանրապետության հրապարակը, եւ շարժը դադարել է՝ ստեղծելով արհեստական խցանումներ: Երեւանի քաղաքապետարանը կամ Երեւանի պարեկային ծառայության անկազմակերպ աշխատանքի արդյունքում քաղաքացիները անմարդկային խցանումների մեջ ուշագնաց են եղել, շարունակվել է երեխաների լացուկոծը: Ավելին, որպեսզի հիմշտոցի արդյունքում երեխաները շնչահեղձ չլինեն, ծնողները երեխաներին նստեցրել էին իրենց ուսերին ու մի կերպ դուրս հանել քաոսից: Անկազմակերպվածությունը ցայտուն էր, քանի որ, օրինակ, Հայաստանում անցկացվող Մանկական եվրատեսիլի ժամանակ, որը ոչ պակաս մեծ միջոցառում էր եւ պատմական իրադարձություն Հայաստանի համար, կազմակերպվածության մակարդակը զգացվում էր նաեւ իրավապահների կողմից: Միջոցառման մուտքի ժամանակ ստուգվում էին քաղաքացիների պայուսակները՝ միջոցառման ընթացքում անցանկալի միջադեպերից խուսափելու համար:

Շարունակությունը՝ ArmLur.am կայքում:

Հակակոռուպցիոն կոմիտեի նախագահի մրցութային խորհուրդը ձեւավորվում է. ՀՀ երրորդ նախագահ Սերժ Սարգսյանի գործով մեղադրող դատախազը հանձնաժողովի անդամ է: Ինչպես հայտնի է, նոյեմբերի 18-ին Նիկոլ Փաշինյանի գիշերային sms-ի արդյունքում Սասուն Խաչատրյանը ազատվեց Կոմիտեի նախագահի պաշտոնից, եւ շուտով մեկ ամիսը կլրանա, ինչ Հակակոռուպցիոն կոմիտեն նախագահ չունի, ու նախագահի ժամանակավոր պաշտոնակատար է էդիկ Հակոբյանը: Եվ ահա, որպեսզի նախագահ ընտրվի, ըստ Հակակոռուպցիոն կոմիտեի մասին օրենքի Հոդված 18-ի՝ պետք է ձեւավորվի Մրցութային խորհուրդ: 1) Հակակոռուպցիոն կոմիտեի նախագահի թեկնածուների ընտրության համար ձեւավորվում է խորհուրդ՝ բաղկացած Կառավարության, Ազգային ժողովի խորհրդի, Բարձրագույն դատական խորհրդի, գլխավոր դատախազի, Մարդու իրավունքների պաշտպանի նշանակած մեկական թեկնածուներից եւ քաղաքացիական հասարակության երկու ներկայացուցչից: «Ժողովուրդ» օրաթերթին հայտնի դարձավ, որ մրցութային խորհրդի մեջ ԲԴԽ ներկայացուցիչը լինելու է ԲԴԽ գիտնական անդամ Կարեն Թումանյանը, արդարադատության նախարարությունից Եփրեմ Կարապետյանը, որը արդարադատության նախարարության հակակոռուպցիոն քաղաքականության մշակման եւ մոնիթորինգի վարչության պետն է, Գլխավոր դատախազության ներկայացուցիչը մրցութային խորհրդում Սերժ Սարգսյանի գործով մեղադրող դատախազ, հակակոռուպցիոն կոմիտեում մինչդատական վարույթի օրինականության նկատմամբ հսկողության վարչության պետ Էդգար Արսենյանն է:

ԶՐՈՒՅՑ

ԳԵՂԱՄ ՆԱԶԱՐՅԱՆԸ՝ ԽՄԲԱԿՑՈՒԹՅՈՒՆԻՑ ԴՈՒՐՍ ԳԱԼՈՒ ՄԱՍԻՆ

«Ժողովուրդ» օրաթերթի հետ զրույցում ԱԺ անկախ պատգամավոր Գեղամ Նազարյանը հայտարարում է, որ «Հայաստան» խմբակցությունից դուրս գալուց հետո մանդատը վայր դնելու մտադրություն չունի:

Պատգամավորի խոսքով՝ իրեն խմբակցությունից չեն հանել, այլ համատեղ որոշում է կայացվել, որ պետք է դուրս գա:

Գեղամ Նազարյանը նաեւ նշեց, որ նախկին թիմակիցների հետ նորմալ հարաբերություններ ունի եւ առանց վիճաբանության է դուրս եկել խմբակցությունից:

Ստորեւ ներկայացնում ենք հարցազրույցը՝ մասամբ:

-Պարոն Նազարյան, նախ, Ձեր թույլտվությամբ, անդրադառնանք լրագրողների կողմից բարձրացված աղմուկին, որի համաձայն՝ Ձեզ նկատել էին Կառավարության մասնաշենք մտնելիս, եւ տեղեկություն տարածվեց այն մասին, որ Նիկոլ Փաշինյանի հետ պետք է հանդիպում ունենայիք: Ի վերջո ի՞նչ պիտի տեղի ունենար, ինչո՞ւ էիք Կառավարություն գնացել:

-Ձեր թույլտվությամբ, չեմ ցանկանում մեկնաբանել այն, ինչ տեղի ունեցավ երեկ:

-Ի վերջո երեկ (դեկտ. 8) Նիկոլ Փաշինյանի հետ հանդիպե՞լ եք:

-Ոչ, այդ մասին չեմ ցանկանում խոսել:

-Պարոն Նազարյան, «Հայաստան» խմբակցությունը հեռացրեց Ձեզ իր կազմից:

-Չհեռացրեց: Քննարկում տեղի ունեցավ, որի ընթացքում համատեղ որոշում կայացվեց, որ պետք է լինեմ անկախ պատգամավոր:

-Պատճառը Ձեր հայտարարությո՞ւնն էր, որի համաձայն՝ ընդդիմության օրակարգում իշխանության հեռացման պահանջ չկա:

-Դուք այդ հարցը օրերս տվել եք Բագրատ Սրբազանին: Նշեցիք, որ Գեղամ Նազարյանը վերոնշյալ արտահայտությունն է արել, սակայն Գեղամ Նազարյանը նման բան չի ասել: Ես բոլորին կոչ եմ անում, որ այսուհետեւ վերնագրերով, կամ ուրիշի պատմածներով դատողություններ չանեն:

-Արտահայտությունը Ձեր հարցազրույցի ընթացքում է հնչել, պարոն Նազարյան:

-Ես նման բան չեմ ասել: Իմ կողմից շատ սիրելի լրագրողը կամայական վերնագիր է դրել, սակայն շատ քչերը ջանք գործադրեցին՝ լսելու հարցազրույցն ու հասկանալու՝ արդյոք Գեղամ Նազարյանը նման բան ասել է, թե ոչ:

-Այդ դեպքում Ձեր ո՞ր միտքն է սխալ հասկացվել, ի՞նչ եք ցանկացել ասել:

-Ես ասել եմ, որ «Հայաստան» դաշինքը Ազգային ժողով չէր գալիս, որպեսզի փոքրամասնություն լինի: «Հայաստան» դաշինքը մասնակցում էր ընտրություններին, որպեսզի ձեւավորի իշխանություն եւ այս դժվար պահին իր վրա վերցնի ծանր բեռը: Այդքան բան:

-Սակայն չստացվեց իշխանության գալ, եւ «Հայաստան» դաշինքը դարձավ ՀՀ Ազգային ժողովում ընդդիմություն: Արդյոք օրակարգում չպե՞տք է լինի:

-Քանի որ ես նման բան չեմ ասել, հենց դրա համար էլ ասում եմ, որ կամայական վերնագիր է նշված: Եվ ասել եմ, որ երբ որոշում կայացվեց, որ վերցնում ենք մանդատները եւ գնում ենք խորհրդարան, այստեղ այդ գլխավոր նպատակին ավելացավ եւս մեկը՝ խորհրդարանում աշխատելը, որը լրացուցիչ գործիքակազմ է՝ 680 հազար մեր հայրենակիցներին բացատրելու, որ իրենք սխալ ընտրություն են արել: Հիմա դուք ասեք, իմ ասածից արդյոք բխո՞ւմ է այն, որ «Հայաստան» խմբակցությունը նման օրակարգ չունի:

Զրուցեց ՔՐԻՍՏԻՆԱ ՄՈՒՇԵՂՅԱՆԸ

ԼՈՒՐԵՐ

ՀՀ ՊԱՐԵԿԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՊԵՏԻ ՈՒՆԵՑՎԱԾՔԸ

«Ժողովուրդ» օրաթերթի տեղեկություններով՝ ՀՀ ՆԳՆ ոստիկանության պարեկային ծառայության պետ, ոստիկանապետի տեղակալ Արթուր Խուդինյանը հայտարարագրել է 3 բնակարան, 9 հողամաս, 1 ավտոկայանատեղի:

Արթուր Խուդինյանը ոստիկանության համակարգի հնաբնակներից է. 2001 թվականին ավարտել է ՀՀ ՆԳՆ ակադեմիան, իսկ 2008 թվականին՝ ՀՀ ոստիկանության ակադեմիան եւ անցել է աշխատանքի ոստիկանության զորքերում, զբաղեցրել տարբեր պաշտոններ:

2018 թվականի հեղափոխությունից հետո Երեւան քաղաքի վարչության ՊՊԾ ոստիկանության գնդի ոստիկանության 5-րդ (հատուկ) գումարտակի հրամանատարից դարձավ Երեւան քաղաքի վարչության ՊՊԾ ոստիկանության գնդի հրամանատար:

Խուդինյանը 2023-2024 թվականներին ՀՀ ՆԳՆ ոստիկանության պարեկային ծառայության պետ է եղել, իսկ այս տարեսկզբին նշանակվել է ՀՀ ՆԳՆ ոստիկանության պարեկային ծառայության պետ, ոստիկանության պետի տեղակալ:

Համաձայն Խուդինյանի՝ 2023 թվականին անշարժ գույքի, եկամուտների, ծախսերի եւ շահերի հայտարարագրի՝նրա կինը՝ Մարիաննա Իսրայելյանը, աշխատում է ՀՀ ոստիկանության Ճանապարհային ոստիկանությունում որպես ՏՄՀԻՎԳՔ (Հայաստանի Հանրապետության Ներքին գործերի նախարարության Տրանսպորտի, Միջաշրջանային եւ Հարկային Վճարումների Գործակալություն Կառավարման բաժին) բաժնի ավագ տեսուչ:

Արթուր Խուդինյանի բազմաբնակարան շենքում գտնվող բնակարաններից մեկը գտնվում է Շենգավիթ վարչական շրջանում, մյուսը՝ Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանում, իսկ 3-րդ անհատական բնակելի տունը գտնվում է Լոռու մարզի Ճոճկան համայնքում:

Տրանսպորտային միջոց չի հայտարարագրել:

Արթուր Խուդինյանի բանկային ավանդները կազմել են 7 մլն 589 հազար դրամ, որը նախորդ տարվա համեմատ աճել է գրեթե 2 մլն դրամով եւ 10 հազար ԱՄՆ դոլար, որը նախորդ տարվանից նույնությամբ պահպանվել է:

Խուդինյանի բանկային հաշիվների մնացորդները կազմել են 1 մլն 113 հազար դրամ: Կանխիկ դրամական միջոցները կազմել են 1 մլն 100 հազար դրամ:

Ոստիկանապետի տեղակալ Արթուր Խուդինյանի հաշվետու տարվա եկամուտները կազմել են 27 մլն 399 հազար դրամ, որից 7 մլն 334 հազար դրամը ՀՀ ոստիկանությունից որպես աշխատավարձ ստացված եկամուտ է:

Որպես այլ եկամուտ՝ նա ՀՀ Պետական եկամուտների կոմիտեից ստացել է 1 մլն 574 հազար դրամ, իսկ եկամուտների մյուս մասը վարկեր են «ՎՏԲ-Հայաստան» բանկից, ACBA-CREDIT AGRICOLE բանկից:

ԷՄՄԱ ՄԻՔԱՅԵԼՅԱՆ

ԲԱՔՎԻ ԴԵՄ ՀԱՅՑԵՐԻՑ ՀՐԱԺԱՐՎԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Միջազգային իրավական հարցերով Հայաստանի ներկայացուցիչ Եղիշե Կիրակոսյանը միտում չի տեսնում, որ Երեւանը պատրաստվում է միջազգային դատական ատյաններում հետ կանչել Բաքվի դեմ հայցերը: Այս մասին Կիրակոսյանն ասաց լրագրողների հետ ճեպազրույցում:

«Այս պահի դրությամբ նոր հայց չունենք, ինչ արդեն իսկ կան, դրանք են: Բոլոր ընթացակարգերը շարունակվում են»,- ասաց Կիրակոսյանը:

Անդրադառնալով հայ գերիների վերադարձի հնարավորությանը՝ Կիրակոսյանը նշեց, որ Երեւանը որոշ ժամանակ առաջ նման պահանջ է ներկայացրել ՄԱԿ-ի դատարան եւ ՄԻԵԴ, սակայն երկու միջազգային դատարաններն են համարել են, որ հարցերն իրենց իրավասությունից դուրս են:

Կիրակոսյանը շեշտեց, որ իր կարծիքով գերիների վերադարձի հարցի լուծումը քաղաքական հարթության մեջ է:

ԱՅՑ՝ ՍԱՀՄԱՆ

ՀՀ-ում Ֆրանսիայի դեսպան Օլիվիե Դըկոտինյին այցել է հայ-ադրբեջանական սահման:

«Մեզ համար մեծ պատիվ է կենտրոնակայանում ընդունել Հայաստանում Ֆրանսիայի դեսպանին», - հայտնում են ԵՄ առաքելությունից:

Դեսպանը տեղեկացվել է առաքելության աշխատանքների մասին. «Նա նաեւ միացել է Խաչիկ գյուղի պարեկին, որպեսզի տեղում հետեւի մեր գործողություններին»,- հայտնում են առաքելությունից:

ԱՇԽԱՐՀԱԶՈՐԸ ԿԼՈՒԾԱՐՎԻ

Հայաստանում աշխարհազորը կլուծարվի, փոխարենը կգործեն տեղական պաշտպանության ուժեր:

«Ժողովուրդ» օրաթերթը տեղեկացավ, որ գործադիրը նոր նախագիծ է ներկայացրել խորհրդարան, որով առաջարկում է փոփոխություններ կատարել Պաշտպանության մասին ՀՀ օրենքում: Գործադիրը, մասնավորապես, առաջարկում է լուծարել աշխարհազորը, փոխարենը ստեղծել տեղական պաշտպանության ուժեր:

Տեղական պաշտպանության ուժերը կազմավորվում են որպես համայնքի պաշտպանության ստորաբաժանումներ:

Հարցը դեկտեմբերի 17-ին կքննարկվի ԱԺ Պաշտպանության եւ անվտանգության հարցերի մշտական հանձնաժողովի նիստում, այնուհետեւ նույն օրակարգով ԱԺ-ն արտահերթ նիստ կհրավիրի:

«Ժողովուրդ» օրաթերթի տեղեկություններով՝ խորհրդարանը մտադիր է դեկտեմբերի 19-ին արտահերթ նիստ գումարել:

Հիշեցնենք, որ ՀՀ-ում աշխարհազորը ստեղծվել է 2020թ.-ին:

ԳԵՐԻՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Ադրբեջանում պահվող գերիների վերադարձի հարցը հիմնականում քննարկվում է քաղաքական օրակարգում, սակայն այս հարցով նաեւ իրավական պահանջներ են ներկայացվել միջազգային ատյաններում: Այս մասին հայտարարեց ՀՀ միջազգային իրավական հարցերով ներկայացուցիչ Եղիշե Կիրակոսյանը:

Կիրակոսյանը նշեց, որ Հայաստանի կողմից գերիների վերադարձի հարցը բարձրացվել է թե՛ արդարադատության միջազգային դատարանում (ԱՄԴ), թե՛ Եվրոպական դատարանում (ՄԻԵԴ), սակայն այդ ատյանները գտել են, որ հարցը դուրս է իրենց իրավասությունից:

«Ցավոք, գերիների վերադարձի հարցը ավելի շատ քաղաքական օրակարգում քննարկվող հարց է, բայց իրավական դաշտում դրա վերաբերյալ պահանջ ներկայացրել ենք թե՛ արդարադատության միջազգային դատարանում, թե՛ Եվրոպական դատարանում: Ցավոք, միջազգային դատարանները համարել են, որ այդ հարցը իրենց անմիջական առարկայական իրավասությունից դուրս է»,- ասաց Կիրակոսյանը:

Կիրակոսյանի խոսքով՝ իրավական գործընթացները հիմնականում ուղղված են գերիների նկատմամբ իրավական երաշխիքների ապահովմանը, մինչդեռ նրանց վերադարձի հարցն ավելի շատ լուծվում է քաղաքական հարթակում:

ՄԱԿ-Ը ԿՐՃԱՏԵԼ Է ԴԱՄԱՍԿՈՍՈՒՄ ԻՐ ԱՆՁՆԱԿԱԶՄԻ ԹԻՎԸ

ՄԱԿ-ը «ժամանակավորապես» կրճատում է անձնակազմի թիվը Դամասկոսի շրջանում՝ Սիրիայում իշխանությունն ընդդիմությանը փոխանցելու ֆոնին, «ՌԻԱ Նովոստի»-ին ասել է կազմակերպության պաշտոնյան:

«Մենք ժամանակավորապես կրճատում ենք մեր անձնակազմի թիվը Դամասկոսի տարածքում»,- ասել է պաշտոնյան: Սիրիայի զինված ընդդիմության ներկայացուցիչները, որոնք գրավել էին պետական հեռուստատեսությունը, ավելի վաղ ուղիղ եթերում հայտարարել էին, որ վերահսկողություն են հաստատել երկրում:

ԻՐԱՎԻՃԱԿ

ԱՄՆ նախագահ Ջո Բայդենն իր ազգային անվտանգության թիմի հետ կքննարկի Սիրիայում տիրող իրավիճակը:

Այս մասին X սոցիալական ցանցում հայտնել է Սպիտակ տան Ազգային անվտանգության խորհրդի մամուլի քարտուղար Շոունա Սավեթը:

Նա նշել է, որ հանդիպումը կկայանա առավոտյան, եւ Բայդենն իր ազգային անվտանգության թիմից լրացուցիչ տեղեկատվություն կստանա Սիրիայում տեղի ունեցող իրադարձությունների մասին:

ԻՐԱՔՆ ԸՆԴՈՒՆԵԼ Է ԱՎԵԼԻ ՔԱՆ ՀԱԶԱՐ ՍԻՐԻԱՅԻ ԶԻՆՎՈՐԱԿԱՆԻ

Իրաքը շաբաթ օրը ընդունել է ավելի քան հազար սիրիացի զինվորների, ովքեր թույլտվություն են խնդրել հատել սահմանը, հայտնում է իրաքյան INA գործակալությունը՝ հղում անելով անվտանգության աղբյուրին:

«Սիրիական բանակի հազարից ավելի զինվորականներ խնդրել են Իրաք մտնել Ալ-Քաիմ սահմանային անցակետով: Զինվորներին ընդունել են, նրանց ցուցաբերվել է անհրաժեշտ օգնություն»,- ասել է գործակալության աղբյուրը:

Ահաբեկչական Հայաթ Թահրիր ալ-Շամ խմբավորումը, այսպես կոչված, սիրիական զինված ընդդիմության մաս կազմող մի շարք զինված կազմավորումների հետ, նոյեմբերի 29-ին լայնածավալ գործողություն է սկսել՝ Իդլիբի հյուսիսից շարժվելով դեպի Հալեպ:

Մեկ օր անց՝նոյեմբերի 30-ին, ահաբեկիչների վերահսկողության տակ է անցել Սիրիայի եւ դրա շրջակայքի մեծությամբ երկրորդ քաղաքը՝ ներառյալ միջազգային օդանավակայանը եւ Քուվեյրիս ռազմական օդանավակայանը:

ՄԱՆՐԱՄԱՍՆԵՐ

ՈՐՏԵՂ Է ՍԻՐԻԱՅԻ ՆԱԽԱԳԱՀ ԱՍԱԴԸ

Դեկտեմբերի 8-ի գիշերը սիրիացի զինյալները մտել էին Դամասկոս եւ հայտարարել Բաշար ալ-Ասադի կառավարության տապալման մասին: Ադստամբներն ասում էին, որ նա փախել է երկրից: Reuters-ը եւ Bild-ը գրում էին նաեւ, որ նախագահը լքել է Դամասկոսը: Սիրիայի առաջնորդի գտնվելու վայրի մասին հստակ տեղեկություններ չեն տալիս:

Կառավարությունը հայտարարել էր, որ ոչինչ չգիտի Ասադի գտնվելու վայրի մասին: Վարչապետ Մուհամմեդ Ղազի ալ-Ջալալին պարզաբանել է, որ վերջին անգամ իր հետ շփվել է դեկտեմբերի 7-ի երեկոյան: Հեռախոսազրույցի ընթացքում նրանք քննարկել են երկրում տիրող իրավիճակը, ապա Ասադն ասել է. «Կտեսնենք վաղը»: Դրանից հետո նրանք չեն շփվել:

Թուրքիայի արտաքին գործերի նախարար Հաքան Ֆիդանը նշել է, որ երկիրը կապեր չի պահպանում Ասադի հետ, չնայած այն հանգամանքին, որ նախագահ Ռեջեփ Թայիփ Էրդողանն առաջարկել է հարաբերությունների կարգավորումը: Ֆիդանի խոսքով՝ Ասադն այժմ կարող է գտնվել Սիրիայի սահմաններից դուրս:

«Ես չեմ կարող որեւէ մեկնաբանություն տալ այս հարցում: Մենք չգիտենք, թե որտեղ է նա: Միգուցե նա գտնվում է Սիրիայի սահմաններից դուրս»,- առաջարկել է Թուրքիայի ԱԳՆ ղեկավարը:

Մինչդեռ ՌԴ ԱԳՆ-ն հայտնել է, որ Ասադը «զինված հակամարտության մի շարք մասնակիցների հետ» բանակցություններից հետո որոշել է լքել իր պաշտոնը եւ լքել երկիրը՝ ցուցումներ տալով իշխանության փոխանցումը խաղաղ ճանապարհով իրականացնել: Նախարարությունը չի հստակեցրել, թե կոնկրետ ուր է նա գնացել:

Ռազմավարական հետազոտությունների ռուսական ինստիտուտի տնօրենի խորհրդական Վլադիմիր Ֆիտինը RT-ի հետ զրույցում նույնպես խոստովանել է, որ Ասադը կարող է թռչել ԱՄԷ: Փորձագետի խոսքով՝ Ասադի ընտանիքը տարհանվել է, եւ նրա եղբայրը եւ նրա ղեկավարած զորքերը կարող էին մեկնել Իրաք:

Համաձայն մեկ այլ վարկածի՝ Ասադը կարող է լինել Ռուսաստանում. Bild-ը նաեւ ուշադրություն է հրավիրում Bloomberg-ի զեկույցի վրա, ըստ որի՝ Ասադը, ենթադրաբար, գտնվում է Իրանում: Միեւնույն ժամանակ, The Wall Street Journal-ը, հղում անելով աղբյուրներին, նշել է, որ Ասադի կինը՝ Ասման, եւ երեք երեխաները անցյալ շաբաթ մեկնել են Ռուսաստան, իսկ ինքը՝ դեկտեմբերի 6-ին, դեռ Դամասկոսում էր, նշում է Bild-ը:

Հունգարական լրատվամիջոցներից մեկը հայտնել է, որ Ասադը ժամանել է Բուդապեշտ, սակայն տեղական իշխանությունը հերքել է այդ լուրերը:

Bloomberg-ը գրում է, որ Ասադը նաեւ խնդրել է ԱՄՆ-ին օգնել դադարեցնել մարտերը Սիրիայում: Գործակալության տվյալներով՝ կապն իրականացվել է ԱՄԷ-ի միջոցով: Ասադը պնդում էր, որ օգնության դիմաց Սիրիան կդադարեցնի բոլոր համագործակցությունները «Իրանի կողմից աջակցվող խմբավորումների», այդ թվում՝ լիբանանյան «Հըզբոլլահի» հետ:

Բացի այդ, Ասադը «բարձրաստիճան քրիստոնյա առաջնորդի» ուղարկեց Հունգարիայի վարչապետ Վիկտոր Օրբանի հետ հանդիպման՝ զեկուցելու Սիրիայի քրիստոնյա փոքրամասնության գոյության սպառնալիքի մասին, եթե հաղթեն իսլամիստ ապստամբները: Ասադը ենթադրում էր, որ Հունգարիայի վարչապետը Թրամփին կպատմի այդ վտանգի մասին, բացատրել է Bloomberg-ը օրերս ներկայացրած զեկույցում:

Ավելի ուշ հաստատվեցին այն տեղեկությունները, որ Ասադը Մոսկվայում է:

Ռուսական պետական լրատվական գործակալությունները հայտնել են, որ Սիրիայի նախագահ Բաշար ալ-Ասադը եւ նրա ընտանիքի անդամները ժամանել են Մոսկվա, եւ Ռուսաստանը նրանց ապաստան է տվել:

Նախագահի պաշտոնից Ասադի հրաժարականի եւ Սիրիայից հեռանալու մասին առաջին պաշտոնական հայտարարությունը արվել է կիրակի՝ առավոտյան, Ռուսաստանի արտաքին գործերի նախարարության կողմից: Սակայն ՌԴ ԱԳՆ-ն այդ պահին որեւէ տեղեկություն չի տրամադրել Ասադի գտնվելու վայրի մասին:

Ավելի ուշ ռուսական լրատվամիջոցները, հղում անելով Կրեմլի աղբյուրին, միաժամանակ հայտնեցին, որ Ռուսաստանը Ասադին եւ նրա հարազատներին ապաստան է տրամադրել «մարդասիրական նկատառումներից ելնելով»:

ԷՄՄԱ ՄԻՔԱՅԵԼՅԱՆ

ՕՐՎԱ ԽՃԱՆԿԱՐ

ՍԻՐԻԱՅԻ ԴԵՍՊԱՆԱՏԱՆ ԲԱԿԻՑ ՀԵՌԱՑՎԵԼ Է ԴՐՈՇԸ

«Ժողովուրդ» օրաթերթն արձանագրել է, որ Սիրիայում ընթացող հակամարտություններից եւ կիրակի օրը Դամասկոսի վերջնական անկումից հետո Հայաստանում Սիրիայի դեսպանատունը բակից հեռացրել է երկրի դրոշը:

Հիշեցնենք, որ դեկտեմբերի 8-ին հայտնի դարձավ, որ Սիրիայի զինված ընդդիմադիրները գրավել են մայրաքաղաք Դամասկոսը: Սիրիայի նախագահ Բաշար Ասադը մայրաքաղաքի անկումից ժամեր առաջ լքել էր այն: Երկրի վարչապետ Մուհամեդ Ալ-Ջալալին հայտարարել էր, որ պատրաստ է համագործակցել ժողովրդի կողմից ընտրված ցանկացած ղեկավարության հետ:

Երկիրը լքելուց ժամեր անց հայտնի դարձավ, որ Սիրիայի նախագահ Բաշար Ասադն ընտանիքի հետ Ռուսաստանի Դաշնությունում է: Այս մասին ռուսական ՏԱՍՍ գործակալությանը հայտնել է Կրեմլի անանուն աղբյուրը:

«Ասադն ընտանիքի անդամների հետ ժամանել է Մոսկվա: Ռուսաստանը, ելնելով հումանիտար նկատառումներից, նրանց ապաստան է տրամադրել»,- հայտնել է գործակալության աղբյուրը:

Է. ՄԻՔԱՅԵԼՅԱՆ

«ԻՆՁ ԿԿԱԼԱՆԱՎՈՐԵՆ». Հ. ԱՂԱՋԱՐՅԱՆ

ՔՊ-ականները ողջ ռեսուրսով փորձում են բարոյապես ոչնչացնել ու խայտառակել իրենց նախկին թիմակից Հովիկ Աղազարյանին, որը ժամանակին Նիկոլ Փաշինյանին Հիսուսի հետ էր համեմատում:

Նիկոլ Փաշինյանի դեմ դուրս եկած Հովիկ Աղազարյանին իշխանական պրոպագանդան հիմա էլ միասեռական կապի մեջ լինելու մեջ է մեղադրում:

Վարչապետի աշխատակազմի ղեկավար Արայիկ Հարությունյանի տեղակալ Տարոն Չախոյանին պատկանող MediaNews կայքը օրերս սկանդալային բացահայտում էր արել: Մեջբերում՝ «Հովիկ Աղազարյանը միասեռական կապի մեջ է եղել մի քանի տղամարդու հետ: Ըստ հրապարակումների՝ Աղազարյանը վարել է ակտիվ սեռական կյանք՝ միաժամանակ սեռական կապի մեջ է եղել մի քանի տղամարդկանց ու կանանց հետ»,- գրել էր կայքը:

Ավելի վաղ սակայն նյութը հեռացվել էր:

Հովիկ Աղազարյանը 24.news.am-ին օրերս տված իր հարցազրույցում հակադարձում է իր նախկին թիմակիցներին՝ նշելով, որ ամեն բան, վաղ թե ուշ, բացահայտվելու է: Նրա պնդմամբ՝ այս ամենն արվում է, որպեսզի իրեն ստիպեն մանդատը վայր դնել, Աղազարյանը նաեւ իրեն ֆիզիկապես ոչնչացնելու մասին է ահազանգում: ՔՊ-ական նախկին պատգամավորը սակայն համառում է՝ մանդատը վայր չի դնելու, ամեն ինչ անելու է իր համբավը պաշտպանելու համար: Հովիկ Աղազարյանը սպառնում է իր նախկին թիմակիցներին՝ եթե իր նկատմամբ ճնշումները շարունակվեն, անուններ է հնչեցնելու:

«Սա կապրիզ չէ, իմ նկատմամբ քրեական վարույթներ կան, եւ եթե այնպիսի ելք լինի, որ ոչինչ չապացուցվի ու ինձ մեղադրանք չկարողանան առաջադրել, իմ շրջապատը կմտածի, թե գնացել եմ գործարքի ու մանդատս վայր եմ դրել, որպեսզի չպատժվեմ»,- ասում է նա:

Ք. Մ.

ՕՊԵՐԱՏԻՎ ԻՐԱՎԻՃԱԿ

ԲԱՑԱՀԱՅՏՎԱԾ ՀԱՆՑԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴԵՊՔԵՐԸ

Ըստ ոստիկանության օպերատիվ հաղորդագրությունների ամփոփագրերի՝ դեկտեմբերի 6-9-ը ՆԳՆ ոստիկանության ստորաբաժանումները բացահայտել են հանցագործության 221 դեպք, որոնցից 6-ը՝ նախկինում կատարված:

Մասնավորապես՝ թմրանյութի հայտնաբերման՝ 38, տրանսպորտային միջոց վարելու իրավունքից զրկված կամ այդ իրավունքը կասեցված կամ այդ իրավունքը չունեցող անձի կողմից տրանսպորտային միջոց վարելու՝ 26, խարդախության՝ 19, ֆիզիկական ներգործության՝ 18, գույքը ոչնչացնելու կամ վնասելու՝ 16, անձնական ունեցվածքի գողության՝ 15, մարմնական վնասվածք պատճառելու՝ 12, հոգեկան ներգործության՝ 10, խուլիգանության ու թմրանյութի իրացման՝ 6-ական, վստահված գույքի հափշտակման՝ 5, զենք-զինամթերքի առգրավման՝ 4, կաշառակերության, ծառերը, թփերը ապօրինի հատելու, բնակարանային գողության, փաստաթղթերը կեղծելու, աշխատանքի պաշտպանության կանոնները խախտելու, ջրային կենդանիներ ապօրինի որսալու, դատական ակտը չկատարելու, սառը զենքի հայտնաբերման եւ ինքնիրավչության՝ 3-ական, ավազակության, համակարգչային հափշտակության, ինքնավնասման, ազատությունից ապօրինի զրկելու, անառակաբարո արարք կատարելու, անձի տիրապետությունից դուրս եկած գույքին տիրանալու, հարկեր, տուրքեր կամ այլ վճարներ չվճարելու, հիգիենիկ նորմատիվները խախտելու, ընդերքի պահպանման կամ օգտագործման պահանջները խախտելու, իրացման նպատակով կեղծ ակցիզային դրոշմանիշներ կամ դրոշմապիտակներ պատրաստելու, պահելու, օգտագործելու կամ իրացնելու, քաղաքացիական կացության ակտերի գրանցման մարմիններին սուտ տեղեկություններ հաղորդելու, 16 տարին չլրացած անձի նկատմամբ սեքսուալ բնույթի գործողություններ կատարելու, մարդու առեւանգման, շորթման, բուժաշխատողի կողմից մասնագիտական պարտականությունները չկատարելու, քրեական ենթամշակույթ կրող անձին դիմելու եւ սեքսուալ բնույթի բռնի գործողության՝ 1-ական դեպք:

Նախկինում կատարված հանցագործություններից բացահայտվել է անձնական ունեցվածքի գողության՝ 3, կենդանիների նկատմամբ դաժան վերաբերմունքի, դրամանենգության ու խուլիգանության՝ 1-ական դեպք:

Հայտնաբերվել է 16 հետախուզվող, կամավոր ներկայացվել՝ 4-ը:

Հայտնաբերվել է 2 անհետ կորած:

Անցած 3 օրվա ընթացքում հանրապետությունում արձանագրվել է ճանապարհատրանսպորտային 32 պատահար. 4 մարդ զոհվել է, 46-ը՝ ստացել տարբեր աստիճանի մարմնական վնասվածքներ:

ՀՀ ՆԳՆ

ՔՐԵԱԿԱՆ ՔՐՈՆԻԿՈՆ

ՊԱՇՏՈՆԱՏԱՐ ԱՆՁՆ ԱԶԱՏԱԶՐԿՎԵԼ Է

Երեւան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանը կայացրել է մեղադրական դատավճիռ եւ բավարարել դատախազի՝ պատժի նշանակման վերաբերյալ միջնորդությունը՝ մեղադրյալ Ա.Մ.-ին դատապարտելով 7 տարի ժամկետով ազատազրկման:

Դատախազը միջնորդել էր Դատարանին «Նուբարաշեն» քրեակատարողական հիմնարկի անվտանգության ապահովման բաժնի առաջատար մասնագետի պաշտոնը զբաղեցրած Ա.Մ.-ին մեղավոր ճանաչել 18.04.2003 թվականին ընդունված Քրեական օրենսգրքի 309.1 հոդվածի 2-րդ մասի 4-րդ կետով (պաշտոնատար անձի կամ պետական մարմնի անունից հանդես գալու իրավասություն ունեցող այլ անձանց կողմից խոշտանգում կատարելը) նախատեսված հանցանքի կատարման մեջ եւ նրա նկատմամբ որպես պատիժ նշանակել ազատազրկումը 7 տարի ժամկետով:

Հիշեցնենք, որ Ա.Մ.-ի նկատմամբ մեղադրանք էր առաջադրվել այն բանի համար, որ նա, 2016 թվականի նոյեմբերի 30-ից զբաղեցնելով արդարադատության նախարարության «Նուբարաշեն» քրեակատարողական հիմնարկի անվտանգության ապահովման բաժնի առաջատար մասնագետի պաշտոնը, 2018 թվականի մարտի 16-ին՝ ժամը 00:35-ից մինչեւ 01:15-ն ընկած ժամանակահատվածում, արդարադատության նախարարության «Նուբարաշեն» քրեակատարողական հիմնարկի շենքում պատժելու նպատակով մի խումբ անձանց կազմում խոշտանգել էր մեղադրյալ Ա.Ա.-ին՝ վերջինիս դիտավորությամբ պատճառելով ֆիզիկական ուժեղ ցավ:

ԵՐԵՔ ՈՍՏԻԿԱՆՆԵՐ ԴԱԺԱՆԱԲԱՐ ԾԵԾԵԼ ԵՆ ԱՐՑԱԽՑՈՒ

Փաստաբան Ռոման Երիցյանը «Ժողովուրդ» օրաթերթին հայտնել է. «Ոստիկանության Չարենցավանի բաժնի աշխատասենյակներից մեկում երեք ոստիկաններ դաժանաբար ծեծի են ենթարկել արցախցի Արա Օհանյանին, ինչի հետեւանքով վերջինս արդեն չորրորդ օրն է, ինչ բուժում է ստանում «Միքայելյան» բժշկական կենտրոնում:

Հիվանդանոց տեղափոխելուց առաջ ոստիկաններն Օհանյանին սպառնացել են եւ հորդորել նշել, որ վնասվածքները վերջինս ստացել է ընկնելու հետեւանքով: Եվ այպես, «ընկնելու» հետեւանքով ստացված վնասվածքներով անձին սկզբից տեղափոխել են Չարենցավանի հիվանդանոց, որտեղից էլ ուղեգրել «Միքայելյան» ԲԿ:

Ըստ հարազատների՝նույն բաժնի ոստիկանները բռնություն են կիրառել նաեւ նրանց, ինչպես նաեւ այլ անձանց նկատմամբ:

Քիչ հետո այս մասին կխոսեմ ուղիղ եթերով», - ասել էր Երիցյանը:

ԼՈՒՐԵՐ

ՆԿԱՏՈՂՈՒԹՅՈՒՆ

Բարձրագույն դատական խորհուրդը բավարարել է արդարադատության նախարարության միջնորդությունը, դատավոր Գառնիկ Ստեփանյանին հայտարարվել է նկատողություն:

Այս մասին հայտնում են ԲԴԽ-ից:

ԲԴԽ որոշման համաձայն՝ դատավորը, պարտավորություն ունենալով դատավճիռը հրապարակելուց հետո ոչ ուշ, քան 5 օրում դրա պատճենը հանձնել մեղադրողին, չի կատարել այն, եւ ավելի քան մեկ տարի անց է այն հանձնել առաքման:

«Արդյունքում՝ դատավորի կողմից խախտվել են դատավարական իրավունքի վերաբերելի նորմեր, որոնք հանգեցրել են վարքագծի կանոնների խախտումների՝ առաջացնելով դատական իշխանությունը վարկաբեկող, ինչպես նաեւ դատական իշխանության անկախության եւ անաչառության վերաբերյալ հանրության վստահությունը նվազեցնող վարքագծի դրսեւորում»,- ասված է ԲԴԽ որոշման մեջ:

Ստեփանյանը 2019-24թթ., եղել է Արարատի եւ Վայոց ձորի մարզերի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի դատավոր, այժմ վերաքննիչ քրեական դատարանի դատավոր է:

ԹՄՐԱՄԻՋՈՑԻ ԴԵՊՔԵՐ՝ ԲԱՆԱԿՈՒՄ

«Ժողովուրդ» օրաթերթին հայտնի է դարձել, որ Սամվել Շահվերդյանին մեղադրանք է առաջադրվել այն բանի համար, որ նա, հանդիսանալով պայմանագրային զինծառայող, կոչումով կրտսեր սերժանտ, 2024թ.-ի մարտ եւ ապրիլ ամիսներին թմրամիջոց գարծածած վիճակում ներկայացել է ծառայության:

«Ժողովուրդ» օրաթերթի տեղեկություններով՝ Աշոտ Վարդանյանին մեղադրանք է առաջադրվել այն բանի համար, որ նա, հանդիսանալով պարտադիր ժամկետային զինծառայող, կոչումով կրտսեր սերժանտ, զինվորոկոն ծառայությունը կրելու այլ վայրում՝ ապօրինի գործածել է թմրամիջոց:

ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ

ՓԱՍՏԱԲԱՆԱԿԱՆ ՊԱԼԱՏԻ 106-ԱՄՅԱԿ

Դեկտեմբերի 6-ին Առնո Բաբաջանյան համերգասրահում տեղի ունեցավ Փաստաբանական պալատի 106-ամյակին նվիրված միջոցառումը:

Երեկոն սկսվեց ՀՀ օրհներգով, ինչին հաջորդեց հարգանքի 1 րոպե լռությունը:

Ողջույնի խոսքով հանդես եկավ Փաստաբանների պալատի նախագահ Սիմոն Բաբայանն ու Փաստաբանների պալատի նախկին նախագահ Արա Զոհրաբյանը:

Միջոցառման ժամանակ պատվոգրեր հանձնվեցին փաստաբաններ Վարազդատ Հարությունյանին, Արմինե Ֆանյանին, Դավիթ Մելքոնյանին: Պատվոգրերը հանձնեց Փաստաբանների պալատի նախագահ Սիմոն Բաբայանը:

Երեկոյի ընթացքում նաեւ հանձնվեցին շնորհակալագրեր:

Երեկոն նաեւ խորհրդանշական էր, քանի որ հետաքրքիր զուգադիպությամբ Փաստաբանական պալատի 106-ամյակին պալատը համալրվեց 106 նոր փաստաբանով:

ԱՆՆԱ ՍՐԱՊԻՈՆՅԱՆ

ԿՐԱԿՈՑՆԵՐ ՆՈՐՔ-ՄԱՐԱՇՈՒՄ

«Ժողովուրդ» օրաթերթի տեղեկություններով՝ դեկտեմբերի 8-ին 61-ամյա արցախցի Ս. Ա.-ն հայտնել է, որ Նորք-Մարաշ վարչական շրջանի Ա. Արմենակյան փողոցի մոտակայքում մաքրման աշխատանքներ կատարելու ժամանակ ինչ-որ մեկը բղավել է իր վրա, հանել լինգը, որպեսզի հարվածի իր հետ աշխատող մեկ այլ անձի, որից հետո ատրճանակից կրակոց է արձակել դեպի օդ:

«Ժողովուրդ» օրաթերթին հայտնի դարձավ, որ իրավապահները արցախցի քաղաքացու ահազանգին ընթացք են տվել, ու պարզվել է, որ 24-ամյա Գ. Մ.-ն Արմենակյան փողոցում կրակոցներ է արձակել: Բանն այն է, որ 61-ամյա Ս.Ա.-ն որպես հավաքարար աշխատում է Երեւանի աղբահանության եւ սանիտարական մաքրման հիմնարկում եւ մի քանի այլ անձանց հետ նշված փողոցում մաքրություն է կատարել, որի ժամանակ Գ.Մ.-ն փողոցում աղբ է թափել: Նրան նկատողություն են արել, ինչից սկսվել է իրարանցում եւ որից առաջացել է վիճաբանություն, եւ 24-ամյա Գ. Մ.-ն կրակել է մեկնարկային ատրճանակից:

Ք. ՄԱՆՈՒԿՅԱՆ

● *Ըստ ոստիկանության տվյալների՝ դեկտեմբերի 6-ից 9-ը ՀՀ ՆԳՆ ոստիկանության ստորաբաժանումների կողմից բացահայտվել է հանցագործության 221 դեպք, որից 6-ը՝նախկինում կատարված:*

ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

ՄԱՐՁ

ԴԻԼԻՋԱՆՈՒՄ ԴԻԼԻՋԱՆՑԻՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՀՈՂ ՉԿԱ

Վարչապետ Նիկոլ Փաշինյանի որոշմամբ 2021թ. փետրվարի 26-ին Դիլիջան համայնքի ղեկավարի պաշտոնակատար նշանակված, Դիլիջան համայնքի ղեկավար Դավիթ Սարգսյանը հարազատ եղբորը՝ Սասուն Սարգսյանին, շուկայականից ցածր գներով հողամաս է օտարել, ինչի համար Սասուն Սարգսյանը Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի կողմից տուգանվել է 300 հազար դրամով: Դիլիջան քաղաքի բնակիչները մեր լրագրողին հայտնեցին, որ երբ իրենք օբյեկտ կառուցելու համար հողամաս տրամադրելու խնդրանքով դիմում են Դավիթ Սարգսյանին, համայնքի ղեկավարը ասում է, որ Դիլիջանում ազատ հողեր չկան: Սակայն համայնքապետը շարունակում է կասկածելի ձեւով հողեր տրամադրել Երեւանի, Վանաձորի, Վարդենիսի, Իջեւանի եւ Հայաստանի այլ բնակավայրերի բնակիչներին: Դիլիջանի համայնքապետարանի ինտերնետային կայքից տեղեկանում ենք, որ Դիլիջան համայնքի ղեկավար Դավիթ Սարգսյանի 2024 թ. սեպտեմբերի 30-ի թիվ 1050-Ա որոշմամբ՝2024թ. նոյեմբերի 1-ին կառուցապատման իրավունքի մրցույթի է ներկայացվել Դիլիջան համայնքի սեփականությունը հանդիսացող բնակավայրերի հողերից 275.3քմ հողամասը (ԼՈՏ-13(ՔԿ-24)), ք. Դիլիջան, Բարեկամության փողոց, թիվ 5, մինչեւ 2060 թ. դեկտեմբերի 31-ը ժամկետով, հասարակական նշանակության օբյեկտի կառուցման նպատակով, 82 590 դրամ տարեկան վճարի մեկնարկային գնով: Կայացած մրցույթում 82 590 դրամ տարեկան վճարի առավելագույն գնով հաղթել է Արտաշատ համայնքի, Բաղրամյան գյուղի, Բաղրամյան փողոց, թիվ 11 տան բնակիչ Թադեւոս Ղամբարյանը, որի մասին մրցութային հանձնաժողովի կողմից կազմվել է թիվ 2 արձանագրությունը: Դավիթ Սարգսյանը նոյեմբերի 4-ին որոշել է հաստատել Դիլիջան համայնքի հողամասերը վարձակալության եւ կառուցապատման իրավունքով տրամադրող մրցութային հանձնաժողովի թիվ 2 արձանագրությունը եւ Դիլիջան համայնքի սեփականությունը հանդիսացող բնակավայրերի հողերից 275.3քմ հողամասը, ք. Դիլիջան, Բարեկամության փողոց, թիվ 5, հասարակական նշանակության օբյեկտի կառուցման նպատակով, մինչեւ 2060թ. դեկտեմբերի 31-ը ժամկետով, կառուցապատման իրավունքով տրամադրել Արտաշատ համայնքի, Բաղրամյան գյուղի, Բաղրամյան փողոց, թիվ 11 տան բնակիչ Թադեւոս Ղամբարյանին, հողամասի տարեկան վճար սահմանել 82 590 դրամը:

Փորձեցինք պարզել, թե ով է Թադեւոս Ղամբարյանը: Բաղրամյան բնակավայրից ասացին, որ նա վաղուց գյուղում չի բնակվում, Երեւանում է: ԿԸՀ կայքում՝ Հայաստանի ընտրողների ցուցակում, նրա մասին տվյալներ չկան:

ՈՍԿԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ

Տավուշ

ՆՈՐ ՃԱՄՓՈՐԴՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՈՎ ՈՉ ՄԻԱՅՆ

ԻՆՉ Է ՍՊԱՍՎՈՒՄ ՁԿՆԵՐԻՆ ԵՎ ՁՐՀՈՍՆԵՐԻՆ

«Ժողովուրդ» օրաթերթը ներկայացնում է, թե 2025-ին ինչ է սպասվում կենդանակերպի նշաններին անհատապես:

Այսօր, ավարտելով ցանկը, անդրադառնում ենք Ձրհոսներին եւ Ձկներին:

2025 թվականը Ձրհոսների համար լինելու է զարգացման, աճի եւ անձնական վերափոխման տարի՝ նշանավորվելով կարիերայի առաջընթացով, ֆինանսական հաջողություններով եւ ռոմանտիկ հնարավորություններով:

Տարին սկսվում է բեղմնավորությամբ, հատկապես մարտից մինչեւ մայիս՝ մեծ հնարավորություններով նոր նախագծերի եւ համագործակցությունների համար: Հունիսից սկսած սպասվում են նոր աշխատանքային հնարավորություններ եւ ճանաչում անցյալ ձեռքբերումների համար: Ֆինանսապես, տարվա կեսին կարելի է ակնկալել աճ եւ ներդրումների համար բարենպաստ ժամանակ:

Տարվա սկիզբը կարող է լինել ավելի զգայուն առողջության տեսանկյունից, բայց ապրիլից իրավիճակը կբարելավվի: Սատուրնի եւ Նեպտունի շարժերը կօգնեն մտավոր կարգապահությանը եւ ստեղծագործական զարգացմանը, իսկ տարվա երկրորդ կեսը կնշանավորվի մտքի ընդլայնման հնարավորություններով:

Կարեւոր ամիսներ Ձրհոսների համար.

.Փետրվար եւ հունիս՝սիրո եւ նոր հարաբերությունների համար:

. Մարտ-մայիս՝կարիերայի համար:

. Ապրիլ՝առողջության եւ կյանքի փոփոխությունների համար:

. Հոկտեմբեր՝ինտելեկտուալ աճի եւ ճանապարհորդությունների համար:

Այս ամենի հետ մեկտեղ անհրաժեշտ է զգուշություն ցուցաբերել ֆինանսական որոշումների եւ հարաբերությունների հարցերում՝ հատկապես օգոստոսին: Ճկունությունն ու համբերությունը կօգնեն հաղթահարել մարտահրավերները եւ տարվա վերջում հաջողությամբ ամփոփել բոլոր ջանքերը:

Ձկներին 2025 թվականին սպասվում է վերափոխումների, աճի եւ բազմաթիվ հնարավորությունների տարի:

Ձկների ստեղծագործական ունակությունները կդառնան կենտրոնական: Եթե Ձկներն աշխատում են արվեստի կամ երեւակայություն պահանջող ոլորտներում, կկարողանան առավելագույնս օգտագործել իրենց տաղանդները: Տարվա ընթացքում սպասվում են կարիերայի շրջանում հաջողություններ, մասնավորապես՝ ավելի մեծ պատասխանատվության կամ ազդեցության ոլորտներ ձեռք բերելու հնարավորություններ: Նոր համագործակցություններն ու գործընկերությունները նույնպես կօգնեն Ձկների աճին, սակայն մրցակցային մարտահրավերներ կարող են ծագել, որոնք կպահանջեն համբերություն ու խելամտություն:

Սիրային կյանքում տարին խոստանում է խորանալ հարաբերություններում: Ամուսնացած զույգերին խորհուրդ է տրվում աշխատել հարաբերությունների ամրացման վրա՝ շեշտելով ազնիվ հաղորդակցությունը: Ազատ Ձկներին սպասվում են նոր ռոմանտիկ հնարավորություններ, սակայն կարեւոր է չանտեսել առողջ սահմանները՝ պաշտպանելու համար սեփական էմոցիոնալ բարեկեցությունը:

Տարվա առաջին կեսին ֆինանսական վիճակը կարող է բարդանալ, հատկապես մարտի վերջում եւ հոկտեմբերի սկզբին: Այս ընթացքում խորհուրդ է տրվում խուսափել խոշոր ծախսերից եւ ուշադրություն դարձնել պլանավորմանը: Սակայն տարվա վերջում ֆինանսական բարելավում է սպասվում, ինչը թույլ կտա ներդրումներ կատարել եւ գումար հատկացնել անձնական կարիքներին:

Ձկների էմոցիոնալ առողջությունը կլինի առաջնահերթ: Խորհուրդ է տրվում ինտեգրել մեդիտացիա կամ յոգա առօրյայում՝ սթրեսի նվազեցման եւ հոգեկան հավասարակշռության համար: Ֆիզիկական առողջության պահպանումն էլ կարեւոր է. ակտիվ կենսակերպն ու լավ սնունդը կօգնեն բարձրացնել էներգիայի մակարդակը:

2025-ը կլինի հոգեւոր աճի եւ ինքնաճանաչման տարի: Հնարավոր է, որ Ձկները նոր հետաքրքրություններ գտնեն կամ ուսումնասիրեն իրենց ներքին աշխարհը: Տարվա ընթացքում Ձկները կզգան փոփոխություններ իրենց կյանքում, որոնք կօգնեն ավելի լավ հասկանալ սեփական նպատակները եւ ուղղությունները:

Ընդհանուր առմամբ, 2025-ը Ձկների համար կլինի փոփոխությունների, ինքնազարգացման եւ նոր հնարավորությունների տարի, ինչը կպահանջի հստակություն, ինտուիցիա եւ հավասարակշռված մոտեցում:

Է. ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

ԱՆՑՈՒԴԱՐՁ

ԱՄԱՆՈՐՅԱ ԶԱՐԴԱՐԱՆՔԸ ՄԻԱՅՆ ԿԵՆՏՐՈՆԻ՞ ՀԱՄԱՐ Է

Ամանորյա զարդարանքը, կարծես թե, միայն Երեւանի կենտրոնի համար է, սրա մասին են վկայում ծայրամասային հատվածների ամանորյա զարդարանքները:

Սոցցանցերում տարածվել է մի լուսանկար, որտեղ երեւում է, թե ինչ անմխիթար վիճակում է Շենգավիթ վարչական շրջանում գտնվող Գարեգին Նժդեհի հրապարակում գտնվող տոնածառը: Հանրապետության հրապարակի շքեղ զարդարանքի հակապատկերը հենց այնտեղ է:

Ընդամենը մի քանի խաղալիք մեծ տոնածառի վրա, մինչդեռ այս տարի Երեւանի քաղաքապետարանն ամանորյա զարդարանքների համար հատկացրել է 549 մլն 706 հազար դրամ:

«Ժողովուրդ» օրաթերթը կապ հաստատեց Երեւանի քաղաքապետի մամուլի քարտուղար Հայկ Կոստանյանի հետ՝ հասկանալու համար՝ինչն է նման իրավիճակի պատճառը:

Վերջինս նշեց. «Շենգավիթ վարչական շրջանի տոնածառը դեռ 2010 թվականին գնված տոնածառ է, այդ նույն տոնածառը տեղադրել ենք, դա եղել է նաեւ նախորդ տարի»: Նա նշեց, որ բոլոր վարչական շրջաններում նախկինում գնված տոնածառերն են: Հիշեցնենք, որ այս տարի Երեւանում Ամանորին նվիրված նախապատրաստական աշխատանքները սկսվել էին 2 ամիս շուտ՝նոյեմբերի 1-ից:

ԷՄՄԱ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

14–ԱՄՅԱ ԵՐԵԽԱՅԻՆ ՉԻ ՀԱՋՈՂՎԵԼ ՓՐԿԵԼ

«Ժողովուրդ» օրաթերթի բացառիկ տեղեկություններով՝ դեկտեմբերի 4-ին Ալավերդիի հիվանդանոցից «Արաբկիր» հիվանդանոց է տեղափոխվել 14-ամյա անչափահաս Ա. Ս.-ն:

«Ժողովուրդ» օրաթերթին հայտնի դարձավ, որ թեեւ բժիշկները ամեն կերպ պայքարել են երեխայի կյանքը փրկելու համար, սակայն դեկտեմբերի 8-ին 14 տարեկան տղան մահացել է:

ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ

ՓՈՇՈՒ ՊԱՐՈՒՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՆՈՐՄԱՅԻՑ ԲԱՐՁՐ Է

Հիդրոօդերեւութաբանության եւ մոնիթորինգի կենտրոնը ներկայացրել է Երեւանում մթնոլորտային օդի որակը նոյեմբերի 28-դեկտեմբերի 4-ը: Փոշու պարունակությունը գերազանցել է սահմանային թույլատրելի կոնցենտրացիան.

. Կենտրոն վարչական շրջանում՝ ամբողջ շաբաթվա ընթացքում,

. Արաբկիրում՝ դեկտեմբերի 4-ին,

. Շենգավիթում՝ նոյեմբերի 28-ին,

. Նոր Նորքում չի գերազանցել:

Ազոտի երկօքսիդի պարունակությունը չի գերազանցել սահմանային թույլատրելի կոնցենտրացիան: Ծծմբի երկօքսիդի պարունակությունը չի գերազանցել սահմանային թույլատրելի կոնցենտրացիան:

● *Անցած 3 օրվա ընթացքում հանրապետությունում արձանագրվել է ճանապարհատրանսպորտային 32 պատահար. 46 մարդ ստացել է տարբեր աստիճանի մարմնական վնասվածքներ:*

ԿԱՐԳԱՎՈՐՈՒՄՆԵՐ

ԻՆՉ ՊԵՏՔ Է ԻՄԱՆԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻՑ ՄԵԿՆԵԼԻՍ

Պետական եկամուտների կոմիտեն հիշեցնում է Հայաստանի Հանրապետության սահմանով ֆիզիկական անձանց կողմից ապրանքների տեղափոխմանը վերաբերող կարգավորումների մասին, որոնց անհրաժեշտ է տեղեկացված լինել Հայաստանի Հանրապետությունից մեկնելիս:

Ֆիզիկական անձանց կողմից անձնական օգտագործման ապրանքները Հայաստանի Հանրապետության տարածքից արտահանվում են առանց մաքսատուրքերի եւ հարկերի վճարման՝ անկախ արժեքից, քաշից եւ (կամ) քանակից: Սակայն, կան անձնական օգտագործման ապրանքներ, որոնք Հայաստանից մեկնելիս ուղեկցող ուղեբեռով տեղափոխելու դեպքում պարտադիր ենթակա են հայտարարագրման: Միեւնույն ժամանակ, մեկնելուց առաջ անհրաժեշտ է իմանալ, որ որոշ ապրանքների արտահանման դեպքում գործում են արգելքներ կամ սահմանափակումներ:

Եթե ֆիզիկական անձը Հայաստանից ապրանքներն արտահանում է ժամանակավոր, ապա կարող է դիմել մաքսային մարմին՝ ժամանակավոր արտահանվող անձնական օգտագործման ապրանքների նույնականացում իրականացնելու համար, քանի որ այդ նույնականացումը կարող է նպաստել առանց մաքսատուրքերի, հարկերի վճարման Հայաստանի Հանրապետության տարածք դրանց հետադարձ ներմուծմանը:

Այն դեպքում, երբ ֆիզիկական անձը պատրաստվում է Հայաստանից ցամաքային ճանապարհով, ուղեկցող ուղեբեռով անձնական օգտագործման ապրանքներ տեղափոխել ԵԱՏՄ անդամ այլ պետություններ՝ ԵԱՏՄ անդամ չհանդիսացող պետության տարածքով, ապա կարող է դրանք Հայաստանի տարածքից արտահանել ուղեւորային մաքսային հայտարարագրի օգտագործմամբ՝ նույնականացում իրականացնելու միջոցով: Այդ ապրանքները պահպանում են միության ապրանքի կարգավիճակը:

Կարեւոր է նաեւ իմանալ, որ ԵԱՏՄ մաքսային սահմանով կամ Հայաստանի Հանրապետության պետական սահմանով մի շարք ապրանքների ապօրինի տեղափոխումը, որը կատարվել է առանց մաքսային հսկողության կամ դրանից թաքցնելով, կամ դրանց մասին հավաստի տեղեկությունները սահմանված կարգով չհայտարարագրելու կամ ոչ իր անվամբ հայտարարագրելու կամ դրանց տեղափոխման համար սահմանված կանոնները, այդ թվում՝ արգելքներն ու սահմանափակումները խախտելու, կամ մաքսային կամ այլ փաստաթղթեր խաբեությամբ օգտագործելու միջոցով համարվում է մաքսանենգություն, որը քրեորեն պատժելի արարք է:

Հայաստանի Հանրապետությունից մեկնող ֆիզիկական անձանց համար ուղեցույցը եւ տեղեկատվությունը կարող եք գտնել ՊԵԿ կայքում:

«ԿՈՆՎԵՐՍ» ԲԱՆԿ

ՄԻԱՑԵԼ Է ՄԱԿ-Ի ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ ԲԱՆԿԻՆԳԻ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐԻՆ

«Կոնվերս» բանկը տարածաշրջանում առաջին ֆինանսական կառույցն է, որը պաշտոնապես միացել է ՄԱԿ-ի Պատասխանատու բանկինգի սկզբունքներին:

Սկզբունքները միասնական համակարգ են կայուն բանկային հատվածի համար, որը մշակվել է աշխարհի տարբեր երկրների բանկերի եւ ՄԱԿ-ի շրջակա միջավայրի ծրագրի ֆինանսական նախաձեռնության (UNEP FI) համագործակցության շրջանակներում:

Պատասխանատու բանկինգի սկզբունքները գլխավոր հենքն են ՄԱԿ-ի Կայուն Զարգացման Նպատակներում եւ Փարիզյան կլիմայի համաձայնագրում արձանագրված տեսլականին բանկերի ռազմավարությունն ու փորձառությունը համապատասխանեցնելու համար:

Պատասխանատու բանկինգի սկզբունքները ստորագրած բանկերը պարտավորվում են կայուն զարգացման իրենց ռազմավարություններում լինել հավակնոտ՝ ձգտելով բիզնեսի հիմքում դնել կայուն զարգացումը՝ միաժամանակ պահպանելով կայուն ֆինանսավորման ոլորտում առաջատար դիրքը:

Առաջնորդվելով Պատասխանատու բանկինգի սկզբունքներով՝ բանկերը, որոշում եւ գնահատում են իրենց գործունեության էկոլոգիական եւ սոցիալական ազդեցությունը, սահմանում եւ իրագործում են նպատակներ այն ոլորտներում, որտեղ ազդեցությունն ամենաէականն է, եւ պարբերաբար հանրությանն են ներկայացնում այդ առաջընթացի մասին հաշվետվություններ:

Պատասխանատու բանկինգի սկզբունքները բանկերին հիմք են տրամադրում կայուն տնտեսության անցման ռիսկերի համակարգային ընկալման եւ հնարավորությունների օգտագործման համար:

Պատասխանատու բանկինգի սկզբունքները ստորագրած բանկերը ստանձնում են առաջնորդություն՝ ցույց տալով, թե ինչպես կարող են բանկային պրոդուկտները, ծառայությունները եւ հարաբերությունները նպաստել ու արագացնել ներկա եւ ապագա սերունդների, մարդկության, երկրագնդի առաջընթացի ապահովման համար անհրաժեշտ փոփոխություններին:

Պատասխանատու բանկինգի սկզբունքները ստորագրած բանկերը նաեւ միանում են աշխարհում ամենախոշոր՝ կայուն ֆինանսավորմանը միտված գլոբալ բանկային հանրությանը՝ կազմակերպելով փորձի փոխանակում եւ ոլորտին նպաստող գործնական առաջարկների ու նորարարական գործիքների միասին մշակում:

Նման հավակնություններն անհրաժեշտ են համաշխարհային ճգնաժամերի դիմադրելու համար, ինչպիսիք են՝ կլիմայի փոփոխությունը, բնության ոչնչացումն ու աղտոտումը եւ սոցիալական այլ խնդիրներ:

«Կոնվերս» բանկի կողմից Պատասխանատու բանկինգի սկզբունքներին միանալու հայտը ստորագրել է Գլխավոր գործադիր տնօրեն, Տնօրինության նախագահ Անդրանիկ Գրիգորյանը:

Պրն Գրիգորյանն ասել է. «Մենք հպարտությամբ հայտնում ենք, որ տարածաշրջանում առաջինն ենք միացել UNEP FI Պատասխանատու բանկինգի սկզբունքներին: Գործունեության ողջ ընթացքում մենք առաջնորդվել ենք բիզնեսի կայուն զարգացման սկզբունքներով, պարբերաբար թարմացրել գործիքակազմը՝ ձգտելով երկարաժամկետ կտրվածքում արժեք ստեղծել աշխատակիցների, հաճախորդների, բաժնետերերի նաեւ ողջ հանրության համար: Մեր պատասխանատվությունը ներառում է կայունության՝ սոցիալական, էկոլոգիական եւ տնտեսական ասպեկտները: Մենք հավաստում ենք եւ պատրաստակամություն ենք հայտնում ակտիվ մասնակցություն ունենալ եւ առաջնորդող դեր ստանձնել կայուն փոփոխություններում»:

«Կոնվերս» բանկը վերահսկվում է ՀՀ ԿԲ կողմից:

ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ

ԶԲՈՍԱՇՐՋՈՒԹՅԱՆ ՑՈՒՑԱՆԻՇ

Հայաստանում 2024 թվականի հունվար-հոկտեմբերին զբոսաշրջային այցելությունների ընդհանուր քանակը կազմել է շուրջ 1 մլն 926 հազար 405, նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ արձանագրվել է 5.8 տոկոս անկում: Այս մասին նշվել է ՀՀ էկոնոմիկայի նախարարության Զբոսաշրջության կոմիտեի տարեկան ամփոփիչ միջոցառմանը:

ՀՀ էկոնոմիկայի նախարար Գեւորգ Պապոյանը դեկտեմբերի 6-ին մասնակցել է ՀՀ էկոնոմիկայի նախարարության Զբոսաշրջության կոմիտեի տարեկան ամփոփիչ միջոցառմանը, որտեղ ներկայացվել են Հայաստանում զբոսաշրջության ոլորտի զարգացման միտումները, հիմնական ցուցանիշները եւ օրենսդրական բարեփոխումները:

Իր ելույթում նախարարը նշել է. «Զբոսաշրջությունը կարեւոր ոլորտ է ոչ միայն այն պատճառով, որ նպաստում է տնտեսության զարգացմանը, աշխատատեղերի ստեղծմանը եւ նոր ներդրումների ներգրավմանը, այլեւ հնարավորություն է տալիս մեր երկիրը ներկայացնել արտաքին լսարանին եւ դիրքավորել այն բարձր մակարդակով:

2025 թվականին նախատեսում ենք իրականացնել բազմաթիվ ծրագրեր, որոնց համար անհրաժեշտության դեպքում կավելացնենք բյուջետային միջոցները: Մենք պատրաստ ենք տարբեր ծրագրերով աջակցելու Հայաստանում բիզնես միջավայրի զարգացմանը»,-նշել է Պապոյանը:

Նախարարը վստահություն է հայտնել, որ համագործակցությունը համաշխարհային բանկի հետ հաջողությամբ կընթանա, եւ կմեկնարկեն նաեւ TRIP ծրագիրը, որը նախատեսում է մինչեւ 100 միլիոն դոլարի ներդրում զբոսաշրջության ոլորտում: Այս ծրագիրը էապես կփոխի Հայաստանի զբոսաշրջային դեմքը՝դարձնելով այն ավելի մրցունակ եւ գրավիչ:

Միջոցառման ընթացքում Զբոսաշրջության կոմիտեի նախագահ Լուսինե Գեւորգյանը ներկայացրել է ոլորտի 2024 թվականի ձեռքբերումներն ու 2025 թվականի ծրագրերը:

Անդրադարձ է կատարվել զբոսաշրջային այցելությունների վիճակագրական տվյալներին, որոնք վկայում են ոլորտի կայուն զարգացման եւ առաջընթացի մասին:

2024 թվականի հունվար-հոկտեմբերին զբոսաշրջային այցելությունների ընդհանուր քանակը կազմել է շուրջ 1,926,405:

2023 թվականի նույն ժամանակահատվածի՝ 2,045,282 ցուցանիշի համեմատ արձանագրվել է 5.8% անկում:

2019 թվականի նույն ժամանակահատվածի՝ 1,675,292 ցուցանիշի համեմատ արձանագրվել է 15% աճ:

2024 թվականին Հայաստանն արժանացել է մի շարք միջազգային մրցանակների:

Շարունակությունը՝ ArmLur.am կայքում:

ՀՐԱՊԱՐԱԿԱՅԻՆ ԾԱՆՈՒՑՄԱՆ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ

Ի փոփոխություն «Ժողովուրդ» օրաթերթի 20.07.2021թ. թիվ 127 (2390) համարի 6- րդ էջում տպագրված «Հրապարակային ծանուցման», տեղեկացնում ենք, որ «ԵՐԵՎԱՆԻ ԱՊՐԱՆՔԱՅԻՆ ԲՈՐՍԱ» ՍՊԸ-ի հարթակում (ք. Երեւան, Սայաթ-Նովա պողոտա, 40 շենք, թիվ 82/31) «ԲԻԷՍԹԻ» ՍՊԸ-ի կողմից կազմակերպված՝ «ԱՄԻՕ ԲԱՆԿ» ՓԲԸ - ին («Հայբիզնեսբանկ» ՓԲԸ) սեփականության իրավունքով պատկանող՝ ՀՀ, Արմավիրի մարզ, համայնք Փարաքար, Մայրաքաղաքային փողոց, 128 հասցեում գտնվող 792.1 ք.մ. բնակելի տան, 8.6 ք.մ. պահեստի, 45.5 ք.մ. լողավազանի, 24.5 ք.մ. առանձնասենյակի, 68.6 ք.մ. ծածկի, 73.7 ք.մ. ծածկի եւ 0.0955 հա մակերեսով հողամասի աճուրդի փուլերը շարունակվելու են 16.12.2024թ.-ին, ժ. 12:00-ին հոլանդական եղանակով, այնուհետեւ յուրաքանչյուր աշխատանքային օր, նույն վայրում, նույն ժամին: Լոտի մեկնարկային գինը՝ 122000000 ՀՀ դրամ: Աճուրդի ավարտը՝ 30.12.2025թ.:

«Հրապարակային ծանուցման» մյուս դրույթները մնում են անփոփոխ:

●«Ժողովուրդ» օրաթերթում եւ Armlur.am կայքում գովազդ, հայտարարություն, հաշվետվություն, ծանուցում տեղադրելու համար զանգահարել 094-455-456 հեռախոսահամարով:

ՄՇԱԿՈՒՅԹ

ԴԵՐԵՆԻԿ ԴԵՄԻՐՃՅԱՆԻ ՍԻՐԵԼԻՆԵՐԸ

ԿԱՏՈՒՆԵՐԸ՝ ՍԻՐԵԼԻ ԿԱՆԱՆՑ ԱՆՈՒՆՆԵՐՈՎ

Հայ գրողներից յուրաքանչյուրը հայտնի է իր հետաքրքիր, առօրյայում տեսանելի յուրօրինակությամբ: Օրինակ՝ Բաֆֆին գրեթե միշտ գիշերն էր ստեղծագործում, Բակունցը սիրում էր զաթա ուտել՝ այն մեղրի մեջ թաթախելով, Խաչատրյանի ամենասիրելի ուտեստներից էր հավի մսով ու բրնձով փլավը, Չարենցը իրեն շրջապատում էր արեւելյան ոճի իրերով ու օգտագործում էր արեւելյան սպասք:



Հայ գրող, հրապարակախոս, արձակագիր, դրամատուրգ եւ թարգմանիչ Դերենիկ Դեմիրճյանը, թերեւս հայտնի է այն հանգամանքով, որ մեծագույն սեր է ունեցել կատուների նկատմամբ:

Դեկտեմբերի 6-ը Դերենիկ Դեմիրճյանի հիշատակի օրն էր:

«Ժողովուրդ» օրաթերթը ներկայացնում է որոշ փաստեր գրողի կյանքից եւ հետաքրքիր մտքերից:

Ինչպես արդեն վերը նշեցինք՝ Դեմիրճյանը մեծագույն սիրով էր սիրում կատուներին եւ իր տանը պահում էր տասնյակ կատուներ: Չնայած դրան՝ Դեմիրճյանը միաժամանակ հոգ էր տանում դրսում ապրող կատուների մասին: Հետաքրքիրն այն է, որ Դեմիրճյանն իր կատուներին անվանում էր իր սիրած կանանց անուններով, օրինակ՝ Էլեոնորա, Շառլոտա, Մարան, Օֆելյա: Դերենիկ Դեմիրճյանի սիրելի կատուներից էր Շառլոտան, եւ ամեն անգամ, երբ սատկում էր Դեմիրճյանի սիրելի կատուներից մեկը, այդ դեպքը դառնում էր ողբերգություն:

Դերենիկ Դեմիրճյանը հաճախել է ջութակի դասերի եւ Ժնեւում ուսանելու տարիներին ձեռք է բերել մի հին ջութակ՝ իտալական «Կրեմոնա» արտադրության: Հետաքրքիրն ու միեւնույն ժամանակ ցավալին այն է, որ 1921 թվականին, երբ Դեմիրճյանն ուզում էր տեղափոխվել Թիֆլիս, նրան թույլ տալիս իր հետ տեղափոխել ջութակը: Գրողին օգնության է հասել սիրելի Եղիշե Չարենցը, ով արվեստի բաժնի վարիչ է եղել: Չարենցը տեղեկանք է տրամադրել այն մասին, որ ջութակը պատկանում է Դեմիրճյանին:

Եղիշե Չարենցը միայն ջութակի համար չէ, որ օգնության ձեռք է մեկնել Դեմիրճյանին: Երբ Դերենիկ Դեմիրճյանի առաջին կինը՝ Մարիամը, ամուսնությունից 10 տարի անց մահացել է, ինչը մեծագույն հարված է հասցրել գրողին, ավելի ուշ Դեմիրճյանը հանդիպել է մի ռուս կնոջ, ում անունը Մարիա է եղել: Մարիա անունով ռուս կինը, սակայն, ամուսնացած էր եւ ուներ երեխա: Չնայած նրան, որ կինն ամուսնացած է եղել, Դեմիրճյանն այնպես է սիրահարվում Մարիային, որ փախցնում է նրան, ինչում էլ իրեն օգնում է երիտասարդ Եղիշե Չարենցը: Մարիան եւ Դերենիկ Դեմիրճյանն ամուսնանում են, քանի որ Դեմիրճյանը կարծում էր, որ այդ սերն աստվածատուր սեր է, եւ ապրում են իրենց կյանքի մնացյալ օրերն իրար հետ:

«Ժողովուրդ» օրաթերթը ներկայացնում է նաեւ գրողի հետաքրքիր, սիրված ու ազդեցիկ մտքերից:

● Մարդն իր ծերությունն զգում է այն ժամանակ, երբ հույսերով ապրելն իր տեղը զիջում է հուշերով ապրելուն:

● Բախտ ասածը ոսկե ձու ածող մի կույր հավ է, որը երբեմն իր ձվերն ածում է անարժանների բռի մեջ:

● Ինչքան թռչում ես դեպի ապագան, այնքան ընդլայնվում է հորիզոնը դեպի անցյալը, եւ խորանում է կյանքը:

● Վերեւից նետած քարը ինչքան ավելի վար է ընկնում, այնքան ավելի է սաստկանում նրա թափը, եւ ամենից ավելի ներքեւին գտնվողին ավելի ուժգին է հարվածում:

● Մի ժողովրդի պատմությունը նրա անկետան է, նրա վկայականը, նրա կենսագրական պատկերը: Պատմությունը նրա հասակն է, նրա փորձը, նրա հնությունը, ստեղծագործական ստաժը: Ամեն ժողովուրդ գալիս է իր պատմությունից:

● Ո՛չ ժամանակն է կրկնվում, ո՛չ գաղափարները, ո՛չ արվեստը: Բայց մի բան կարող է կրկնվել. դա վերաբերմունքն է դեպի արվեստը եւ ստեղծագործությունը:

● Դրախտն ու դժոխքը մեր ջահելությունն ու ծերությունն են: Ուրիշ գաղտնիք չկա:

● Այս հավատից չեն կարող խախտել մեզ ո՛չ հրեշտակ, ո՛չ մարդիկ, ո՛չ հուր, սուր: Այլեւս դու այս ամեն բանի մասին մեզ մի հարցնի, որովհետեւ ոչ թե մարդու հետ է մեր հավատի ուխտը, որ խաբվենք իբրեւ երեխաներ, այլ անխզելի է Աստծո հետ, որ չի կարելի քանդել եւ հեռու նետել ո՛չ այժմ եւ ո՛չ ապա, եւ ո՛չ հավիտյանս, եւ ո՛չ հավիտենից հավիտյանս:

● Մեր նախնիները մեզ կտակեցին հայրենիք եւ ազգ: Արյամբ պաշտպանեցին նրանք մեր ազատության հայրենիքը եւ մեզ հրաման թողին անբասիր պահել այդ սրբությունները: Պաշտպանենք մեզ կտակած գանձերը: Մեռնենք՝ չտանք թշնամուն ոչինչ:

ԱՆՆԱ ՍՐԱՊԻՈՆՅԱՆ

ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ

ԹԱՆԳԱՐԱՆԸ ՎԵՐԱԿԱՆԳՆՎՈՒՄ Է

ՀՀ ԿԳՄՍ նախարարի տեղեկալ Ալֆրեդ Քոչարյանն այցելել է Տավուշի մարզի Դիլիջան քաղաքի Հովի. Շարամբեյանի անվան ժողովրդական արվեստների թանգարան՝ ծանոթանալու շենքի վերականգման աշխատանքներին:

Նախարարի տեղակալին ներկայացվել է իրականացված աշխատանքը, առանձին հարցեր քննարկվել են նաեւ հեղինակային եւ տեխնիկական հսկողությունն իրականացնող մասնագետների հետ:

Մինչ հիմնանորոգման աշխատանքները պատմության եւ մշակույթի անշարժ հուշարձանների պետական ցուցակում ընդգրկված թանգարանի շենքը վթարային վիճակում էր:

Կրթության, գիտության, մշակույթի եւ սպորտի նախարարության միջոցներով վերականգնման աշխատանքները սկսվել են 2022 թ., կավարտվեն 2024 թ.:

ԿԳՄՍ նախարարության միջոցներով այժմ պատվիրված է նաեւ թանգարանի տարածքի բարեկարգման նախագիծը, որը կիրականացվի 2025 թ.:

ՀՀ ԿԳՄՍՆ Հասարականության հետ կապերի եւ տեղեկատվության վարչություն

ՎԱՃԱՌՎԵԼ ԵՆ ԹԱՆԳԱՐԱՆԻՑ ԳՈՂԱՑՎԱԾ ԿՈՇԻԿՆԵՐԸ

Հոլիվուդյան լեգենդ Ջուդի Գարլենդի «Օզ երկրի կախարդը» մյուզիքլից ռուբինե կոշիկների զույգը, որ գողացվել էր Մինեսոտայի թանգարանից մոտ 20 տարի առաջ, շաբաթ օրը աճուրդում վաճառվել է 28 միլիոն դոլարով: Ըստ Heritage Auctions-ի, այս զույգը, որը պահպանված չորրս զույգից մեկն է, որ Գարլանդը կրել է ֆիլմում, ամենաթանկարժեք իրն է, որը երբեւէ վաճառվել է աճուրդում:

«Ջուդի Գարլենդի ռուբինե կոշիկները պարզապես համեմատելի չեն հոլիվուդյան այլ իրերի հետ, - ասել է՝ Heritage Auctions-ի գործադիր փոխնախագահ Ջո Մադալենան: «Ապշեցնող արդյունքը ցույց է տալիս, թե որքան կարեւոր են ֆիլմերն ու հիշատակի առարկաները մեր մշակույթի եւ կոլեկցիոներների համար»:

Աճուրդի տան միջնորդավճարը ներառյալ՝ կոշիկների ընդհանուր արժեքը կազմել է ապշեցուցիչ 32,5 միլիոն դոլար, ինչը գրեթե 11 անգամ գերազանցում է աճուրդի տան նախաաճուրդային գնահատականը՝ 3 միլիոն դոլար:

32,5 միլիոն դոլար արժողությամբ կոշիկներն ամենաթանկարժեք կինոարտեֆակտներն են աշխարհում եւ օգնեցին այս աճուրդը դարձնել ամենահաջողակը, որը երբեւէ անցկացվել է զվարճանքի ոլորտում, ասում է Heritage Auctions-ի հասարակայնության հետ կապերի փոխնախագահ Ռոբերտ Վիլոնսկին:

ՄԱՐԶԱԿԱՆ

ԱԼԵՔՍԱՆԴՐԱ ԳՐԻԳՈՐՅԱՆԸ՝ ԲՐՈՆԶԵ ՄԵԴԱԼԱԿԻՐ

Հայաստանի ծանրամարտի կանանց հավաքականի անդամ, 19-ամյա Ալեքսանդրա Գրիգորյանը բրոնզե մեդալ է նվաճել Բահրեյնում ընթացող աշխարհի առաջնության 55 կգ քաշային կարգում՝ երկամարտում գրանցելով 205 կգ արդյունք (85+120 կգ):

Հրում վարժությունում նա բարձրացրեց 117 կգ եւ 120 կգ: Այս վարժությունում Գրիգորյանը դարձավ փոքր արծաթե մեդալակիր:

Երկամարտում սա Հայաստանի առաջին մեդալն էր Բահրեյում մեկնարկած աշխարհի առաջնությունում:

Ավելի վաղ Հայաստանի ներկայացուցիչ, 61 կգ քաշային Գառնիկ Չոլակյանը, հանդես գալով B խմբում, փոքր արծաթե մեդալ էր նվաճել պոկում վարժությունում: A խմբի արդյունքներից հետո Չոլակյանը երկամարտում զբաղեցրել է 7-րդ տեղը:

ՀԱՂԹԱՆԱԿ

Գաբրիել Սարգսյանը հաղթանակով է մեկնարկել Հյուսիսային Մակեդոնիայի մայրաքաղաք Սկոպյեում անցկացվող արագ եւ կայծակնային շախմատի Եվրոպայի առաջնությունում:

Առաջին տուրում Հայաստանի ներկայացուցիչը սպիտակներով պարտության է մատնել բելգիացի Ժոզե Շառլին:

Արագ շախմատի առաջնությունը անցկացվել է դեկտեմբերի 7-ից 8-ը՝ 11 խաղափուլով:

Կայծակնային շախմատի առաջնությունը (չխմբ.) կանցկացվի դեկտեմբերի 9-ին՝ 13 խաղափուլով:

ՄԲԱՊԵՆ ՊԱՏԱՍԽԱՆԵԼ Է ԻՐ ՔՆՆԱԴԱՏՆԵՐԻՆ

Ֆրանսիայի հավաքականի եւ Մադրիդի «Ռեալի» հարձակվող Կիլիան Մբապեն կիսվել է Լա Լիգայի 16-րդ տուրի «Ժիրոնայի» հետ խաղում իր տպավորությամբ: Խաղն ավարտվել է «Ռեալի» հաղթանակով (3:0), իսկ Մբապեն դարձել է իր թիմի երրորդ գոլի հեղինակը:

«Գոլ խփել ձախողված խաղերից հետո՞: Դա իմ աշխատանքի մասն է: Ես օգնում եմ թիմին եւ փորձում եմ դա անել յուրաքանչյուր խաղում՝ խաղալով բնավորությամբ եւ օգնելով հաղթանակների հասնել»,- Մբապեի խոսքերն է մեջբերում իսպանական AS պարբերականը, փոխանցում է armsport.am-ը:

Ավելի վաղ Մբապեն քննադատության էր ենթարկվել ՁԼՄ-ների եւ փորձագետների կողմից վերջին խաղերում իր ցուցադրած «անատամ խաղի համար»:

Մբապեն ընթացիկ մրցաշրջանում մասնակցել է 21 խաղի՝ դառնալով 11 գոլի եւ 3 գոլային փոխանցման հեղինակ:

● *Դեկտեմբերի 23-ին՝ ժամը 19:00-ին, Հ. Ղափլանյանի անվ. պետական դրամատիկական թատրոնում կցուցադրվի «Ընկույզկոտրուկի գաղտնիքը» ներկայացումը: Տոմսերի արժեքը՝ 1.500-4.000 դրամ:*

ԵՂԵ՛Ք ? ՏԵՂԵԿԱՑՎԱԾ

ՍՈՑԻԱԼԱԿԱՆ

ՀԱՐՑ. Ինչպե՞ս են պարզում օտարերկրյա ընտանեկան իրավունքի նորմերի բովանդակությունը:

Հերմինե Հայրապետյան (24 տարեկան)

ՊԱՏԱՍԽԱՆ. Օտարերկրյա ընտանեկան իրավունքի նորմեր կիրառելիս դատարանը կամ քաղաքացիական կացության ակտերի պետական գրանցում իրականացնող մարմինները եւ այլ մարմիններ այդ նորմերի բովանդակությունը պարզում են համապատասխան օտարերկրյա պետությունում՝ դրանց պաշտոնական մեկնաբանությանը եւ կիրառման պրակտիկային համապատասխան: Օտարերկրյա ընտանեկան իրավունքի նորմերի բովանդակությունը պարզելու նպատակով դատարանը, քաղաքացիական կացության ակտերի պետական գրանցում իրականացնող մարմինները եւ այլ մարմիններ կարող են սահմանված կարգով դիմել Հայաստանի Հանրապետության կամ օտարերկրյա իրավասու մարմիններ՝ համապատասխան պարզաբանում ստանալու համար, կամ ներգրավել փորձագետների:

ՀՀ աշխատանքի եւ սոցիալական հարցերի նախարարություն

«ԺՈՂՈՎՈՒՐԴ». Շահագրգիռ անձինք իրավունք ունեն ներկայացնելու օտարերկրյա ընտանեկան իրավունքի նորմերի բովանդակությունը հավաստող այն փաստաթղթերը, որոնց վրա նրանք հիմնվում են իրենց պահանջներն ու առարկությունները հիմնավորելու համար, կամ այլ կերպ՝ աջակցել դատարանին եւ քաղաքացիական կացության ակտերի պետական գրանցում իրականացնող մարմիններին եւ այլ մարմինների՝ օտարերկրյա ընտանեկան իրավունքի նորմերի բովանդակությունը պարզելու համար:

Էջը՝ ԱԼՎԱՐԴ ԿՈՇԿԱԿԱՐՅԱՆԻ

ՖԻՆԱՆՍՆԵՐ

ՀԱՐՑ. «Դրամարկղային գործառնությունների մասին» ՀՀ օրենքը տարածվո՞ւմ է արդյոք գրավատներ վրա:

Մեսրոպ Պատվականյան (39 տարեկան)

ՊԱՏԱՍԽԱՆ. «Դրամարկղային գործառնությունների մասին» ՀՀ օրենքի 2-րդ հոդվածի համաձայն՝ օրենքը տարածվում է ՀՀ տարածքում գործող իրավաբանական անձանց, ԱԱՀ վճարող համարվող անհատ ձեռնարկատերերի, պետական եւ այլ հիմնարկների, դրանց՝ ՀՀ տարածքում գործող առանձնացված ստորաբաժանումների (մասնաճյուղերի, ներկայացուցչությունների), օտարերկրյա կազմակերպությունների՝ ՀՀ տարածքում գործող առանձնացված ստորաբաժանումների (մասնաճյուղերի, ներկայացուցչությունների) (այսուհետ՝ կազմակերպություններ) վրա: Այն չի տարածվում բանկերի եւ դրանց առանձնացված ստորաբաժանումների (մասնաճյուղերի, ներկայացուցչությունների), այդ թվում՝ օտարերկրյա բանկերի առանձնացված ստորաբաժանումների (մասնաճյուղերի, ներկայացուցչությունների), արտարժույթի առք ու վաճառքի գործառնություններ իրականացնող անձանց, վարկային կազմակերպությունների վրա:

ՀՀ պետական եկամուտների կոմիտե

«ԺՈՂՈՎՈՒՐԴ». «Դրամարկղային գործառնությունների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի համաձայն՝ կանխիկ դրամով վճարումների նկատմամբ սահմանվում է սահմանափակում. ապրանքների, ծառայությունների, աշխատանքների միանվագ գնման դեպքում դրանց դիմաց կանխիկ դրամով վճարման գումարի առավելագույն չափը 300000 դրամ է:

ԼՈՒՐ ԿԱԴՐ

Լուսանկարը՝ համացանցից

Երեկ՝ երեկոյան, հայտարարվեց, որ Հայաստանի ֆուտբոլի ազգային թիմի եւ «Կրասնոդար»-ի ավագ էդուարդ Սպերցյանն ընդգրկվել է ռուսական Պրեմիեր լիգայի առաջին հատվածի 10 լավագույն ֆուտբոլիստների շարքում:

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Մեր թերթը Բաժանորդագրվելու համար կարող եք դիմել

«Հայփոստ» ՊՓԲԸ
հեռ. 51-45-46, 51-45-47

«Բլից-Մեդիա» ՍՊԸ
հեռ 52-5301

Առաքումը՝ **ԱՆՎՃԱՐ**:

Ձեզ հետաքրքրող ցանկացած հարցով կարող եք դիմել «Ժողովուրդ» օրաթերթի խմբագրություն (**010 54-64-23** հեռախոսահամարով), եւ մենք անպայման կանդրադառնանք ձեր բարձրացրած բոլոր խնդիրներին:

ԵՂԱՆԱԿԻ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ

Շիրակ	-5 - 9 -1 + 2
Կոտայքի լեռներ	-6 - 8 -1 +1
Կոտայքի նախալեռներ	-3 - 5 +3 + 5
Գեղարքունիք	-7 - 11 - 2 + 1
Լոռի	- 4 - 8 +1 + 4
Տավուշ	0 - 4 +3 + 6
Արագածոտնի լեռներ	- 6 - 9 0 - 2
Արագածոտնի նախալեռներ	-1 - 4 + 4 + 7

Արարատ	0 - 4 +6 + 8
Արմավիր	-1 - 5 + 5 + 7
Վայոց ձորի լեռներ	-6 - 10 0 - 2
Վայոց ձորի նախալեռներ	-1 + 2 +12 + 14
Սյունիքի հովիտներ	0 + 3 + 8 + 10
Սյունիքի նախալեռներ	- 4 - 8 - 1 + 4
ԼՂՀ	- 3 - 7 0 + 6
Երեւան	0 - 2 + 2 + 4

ԱՌԱՋԱՐԿ
հայկական տպագիր մամուլից

«Ժողովուրդ» օրաթերթին բաժանորդագրվելու համար կարող եք լրացնել հետեւյալ բլանկը եւ ուղարկել նշված հասցեով: Ամեն օր թերթը կհասնի ձեր նախընտրելի վայր:

Բաժանորդագրության բլանկ

Անուն՝ _____
Ազգանուն՝ _____
Առաքման հասցե՝ _____
Բջջային եւ/կամ քաղաքային հեռախոս՝ _____

Հեռ.՝ (060) 490049
0023, Արշակունյաց 2, 5-րդ հարկ, 518ա.

Լրատվական գործունեություն իրականացնող՝
«Ժողովուրդ թերթի խմբագրություն» ՍՊԸ
Հասցեն՝ ք. Երեւան, Աբովյան 22ա/3, հեռ՝ **010 54-64-23**
Պետական գրանցման վկայականի համարը՝ 03Ա089086
տրված է 24.11.2010
Ստորագրված է տպագրության **9.12.2024**
Տպաքանակ՝ 3968
Հասցեն՝ Գեղարքունիքի մարզ, ք. Վարդենիս, Վ. Հակոբյանի 2/21

Գլխավոր խմբագիր՝
ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ

Տպագրված է «ԳԻՆԴ» տպարան ՍՊԸ հրատարակչությունում
Խմբագրություն հանձնված նյութերը չեն գրախոսվում եւ չեն վերադարձվում, **Գ** նշանով նյութերը գովազդային հրապարակումներ են, որոնց համար խմբագրությունը պատասխանատվություն չի կրում:

«Ժողովուրդ» օրաթերթում հրապարակված նյութերը արտատպելիս կամ ընթացիկ մեջբերումներ անելիս պետք է պարտադիր գրառել հետեւյալ նախադասությունը. *«Շարունակությունը կարող եք կարդալ «Ժողովուրդ» օրաթերթի այսօրվա համարում»:*